# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Օձուն, 077749998, odzun.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 191-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

Հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 29/08/2022 թվականի, թիվ Կ-29082022-06-0144 որոշումը

***Որոշում եմ.***

Օձուն համայնքի ղեկավարի 25 մարտի 2022 թվականի, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0015-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.41873 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՎԻԹ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 79-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1. Միավորել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի **06-014-0015-0009, 06-014-0015-0010, 06-014-0015-0011, 06-014-0015-0021, 06-014-0015-0012, 06-014-0015-0013, 06-014-0015-0014, 06-014-0015-0015, 06-014-0015-0016, 06-**

014-0015-0017, 06-014-0015-0018, 06-014-0015-0019, 06-014-0015-0020, 06-014-0015-0021, 06-014-0015-0022, 06-014-0015-0023, 06-014-0015-0024, 06-014-0015-0025, 06-014-0015-0038, 06-014-0015-0039, 06-014-0015-0040, 06-014-0015-0041, 06-014-0015-0042, 06-014-0015-0043, 06-014-0015-0044 ծածկագրերով անշարժ գույքերը և միավորված բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության **0.41873**հեկտար մակերեսով, Օձուն համայնք, գյուղ Այգեհատ, փողոց 10 տուն 22 հասցեում գտնվող, բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի և հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականիմայիսի 15-ը օրինական կառուցված (կառուցվել է 1950 թվականին) և 19.07.2008 թվականի դրությամբ առկա, **273.76 քառակուսի մետր** ընդհանուր մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները (համաձայն հատակագծի) (այսուհետ՝ անշարժ գույք), օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ **ԴԱՎԻԹ ՌՈՒԲԵՆԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ՝** ծնված **17.03.1948թ.** սեփականությունը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ՏԻՏԱՆՅԱՆ

20 22 թ.
Օգոստոսի30
գ.Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 192-Ա**

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 5-րդ հոդվածի 5-րդ կետով, 7-րդ հոդվածի 10-րդ և 15-րդ կետերով, 26-րդ հոդվածի 1-ին կետով, 43-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածքվ, Հայաստանի Հանրապետության կառավարության 29,12,2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 88 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ավագանու 02.09.2022 թվականի թիվ 57-Ա որոշումը և «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊԸ-ի հայտը, սեփականության իրավունքի թիվ 08042022-06-0032 վկայականը/գաղտնաբառ YJEIWBZ4P2T9/ լիցենզավորված անձի կողմից կազմված հատակագծերը՝

***որոշում եմ.***

1. «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Օձուն համայնք գյուղ գ.Այգեհատ 9-րդ փողոց 17 հասցեում 06-014-0311-0130 ծածկագրով 2,385435 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի տարանջատել 0,876038 հա և 1,509397 հա հողամասերի, հաստատել տարանջատված հողամասերի սահմանները և համարել առանձին գույքային միավորներ:
2. 06-014-0311-0130 ծածկագրով 2,385435 հա հողամասից տարանջատված 0,876038 հա հողամասին եվ հողամասում առկա շինություններին տրամադրել գյուղ Այգեհատ, փողոց 9 թիվ 17/1 փոստային հասցեն:
3. 06-014-0311-0130 ծածկագրով 2,385435 հա հողամասից տարանջատված 0,876038 հա հողամասին տրամադրել գյուղ Այգեհատ, փողոց 9 թիվ 17 փոստային հասցեն:
4. 06-014-0311-0130 ծածկագրով 2,385435 հա հողամասից տարանջատված 0,876038 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել ջրային ֆոնդի հողերի նպատակային նշանակության լճերի համար նախատեսված հողեր գործառնական նշանակության:
5. «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊԸ-ին Օձուն համայնք գյուղ գ.Այգեհատ 9-րդ փողոց 17 հասցեում 06-014-0311-0130 ծածկագրով, սեփականության իրավունքի թիվ 08042022-06-

0032 վկայականում նշված թիվ 2 շինության, որը համաձայն լրացուցիչ նշումների հանդիսանում է ձկնաբուծական ջրավազան, գործառնական նշանակությունը փոխադրել արհեստական լիճ, ոռոգման ջրամբար:
6. Հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ կետը, պարտավորեցնել «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՏԱՆ» ՍՊԸ-ին որպես նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքների տարբերության Օձուն համայնքի բյուջե վճարել 1 531 750 ՀՀ դրամ, որպես նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքների տարբերություն:
7.Սույն որոշման 5-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել Օձուն համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում:
8. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ սեպտեմբերի 5,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն